## ՀՀ ԳԱԱ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ 60 ՏԱՐԻՆ

1943 թ. նոյեմբերին, Հայրենական մեծ պատերազմի դժվարին օրերին, Հայկական ԽՍՀ ժողկոմխորհի հրամանագրով ԽՍՀՄ գիտությունների ակադեմիայի Հայկական մասնաճյուղի հիման վրա ստեղծվեց Հայաստանի գիտությունների ակադեմիան: Ակադեմիայի կազմում պատմության ինստիտուտը դարձավ առանձին հաստատություն: Նրա առաջին տնօրենը ակադեմիայի պրեզիդենտ, ակադեմիկոս Հովսեփ Օրբելին էր (1943-1947): Այնուհետև ինստիտուտի տնօրեն են դարձել Աբգար Հովհաննիսյանը, Սուրեն Երեմյանը, Արմո Հարությունյանը (Հարենց), Գալուստ Գալոյանը, Հրանտ Ավետիսյանը և Աշոտ Մելքոնյանը:

Ինչպես հայտնի է, խորհրդային իշխանության հենց առաջին տարիներին գիտության ազատ զարգացումը կաշկանդվեց: Պատմական գիտությունը ևս դրվեց գաղափարական կապանքների մեջ: 1928 թ. ստեղծվեց մարքսիստ պատմաբանների խորհուրդը: Անտեսվեցին կամ խեղաթյուրվեցին հայոց պատմության, հատկապես նորագույն շրջանին վերաբերող շատ հարցեր: Այնուամենայնիվ, պատմության ինստիտուտի ստեղծումով ոչ միայն խորանալու, այլև ընդլայնվելու էին գիտության տվյալ համակարգի՝ հայոց պատմության ուսումնասիրության սահմանները: Ինստիտուտի կառուցվածքում գործում էին պատմության, հնագիտության և վիմագրության, փիլիսոփայության ու արվեստի պատմության չորս բաժինները, որոնք տվյալ ժամանակաշրջանի վավերագրերում կոչվել են սեկտորներ, իսկ հետագայում դարձան առանձին ինստիտուտներ: Պատմության սեկտորին կից գործում էր Հայրենական մեծ պատերազմի պատմության կաբինետ, որը զբաղվում էր Մեծ հայրենականին հայ ժողովրդի մասնակցության հարցերով:

Նորաբաց ինստիտուտի կյանքում նշանակալի էր 1943 թ. դեկտեմբերին հրավիրված գիտական խորհրդի անդրանիկ նիստը: Բացելով այն, Հովսեփ Օրբելին, շնորհավորելով կոլեկտիվին՝ կանգ է առել մշակվելիք գիտական աշխատանքների ուղղությունների վրա: Նա կարևորել է պատմական սկզբնաղբյուրների հրատարակությունն ու ուսումնասիրությունը և հայոց պատմության առանձին հարցերին նվիրված մենագրությունների ստեղծումը: Հովսեփ Օրբելու ուշադրությունից չի վրիպել նաև հայ ժողովրդի զավակների սխրագործություններին, գիտության և արվեստի բնագավառների ականավոր գործիչներին նվիրված գիտահանրամատչելի գործերի հրատարակության անհրաժեշտությունը: Նա իր խոսքում անդրադարձել է նաև հայ-ռուսական հարաբերությունների պատմության ուսումնասիրության կարևորությանը: Հ. Օրբելու ներածական խոսքը, փաստորեն, ծրագրային նշանակություն է ունեցել և ինստիտուտի գիտական աշխատանքների հիմքում երկար տարիներ ընկած են եղել հետազոտական այդ ուղղությունները: 1944 թ. ինստիտուտի կառուցվածքում տեղի է ունեցել փոփոխություն: Պատմության բաժինը տրոհվել է երկու՝ հին ու միջին դարերի և նոր դարի բաժինների: Նոր կառուցվածքների ստեղծումը նպաստում էր ինստիտուտում գիտական ուսումնասիրությունների որակի և արդյունավետության բարձրացմանը: Այս նույն ժամանակաշրջանում կտրուկ աճում է գիտաշխատողների թիվը: 1944 թ. հունվարի 13 գիտաշխատողի

փոխարեն, սեպտեմբերին ինստիտուտում աշխատել են 33-ը, իսկ 1945 թ. աշխատողների թիվը հասել է 41-ի:

Պատմության ինստիտուտում աշխատանքներն ընթացել են ճիշտ նույն հունով, ինչ մյուս հաստատությունների աշխատանքները: Պարբերաբար գումարվել են գիտական խորհրդի նիստեր, որոնցում լսվել են զեկուցումներ, քննարկվել են գիտակազմակերպական հարցեր: Յուրաքանչյուր տարվա վերջում աշխատակիցները տնօրինությանն են ներկայացրել իրենց հաշվետվությունները: Հովսեփ Օրբելու բնութագրումով՝ յուրաքանչյուր գիտական բանավեճ տոն է գիտության աշխատողների համար: Այդ տոնը, նրա ասելով, կրկնակի է, երբ պաշտպանվում է դոկտորական ատենախոսություն: Այս առումով հիշարժան է 1944 թ. հունվարի 30-ի գիտական խորհրդի նիստը, որը վարել է Հ. Օրբելին: Նիստում դրվել է Բ. Պիոտրովսկու «Ուրարտուի պատմությունը և մշակույթը» ատենախոսության հրապարակային պաշտպանությունը, որն առաջինն էր նորաստեղծ ինստիտուտի կյանքում: Այդ տարիներին պատմության ինստիտուտի գիտական խորհրդի կազմում ընդգրկված էին ավագ և երիտասարդ սերնդի ականավոր գիտնականներ՝ Հովսեփ Օրբելին, Հակոբ Մանանդյանը, Գրիգոր Ղափանցյանը, Ստեփանոս Մալխասյանը, Ավետիք Իսահակյանը, Գարեգին Լևոնյանը, Լևոն Մելիքսեթ-Բեկը, Հայկ Գյուլիքևխյանը, Կամիլիա Տրևերը, Վահան Ռշտունին, Արարատ Ղարիբյանը, Բորիս Պիոտրովսկին, Աբգար Հովհաննիսյանը, Վազգեն Չալոյանը, Մկրտիչ Ներսիսյանը, Մորուս Հասրաթյանը և ուրիշներ: Աշխատակիցների գործերը հրատարակվում էին ինստիտուտի խմբագրական-հրատարակչական խորհրդի երաշխավորությամբ:

Պատմության ինստիտուտում աշխատանքները հիմնականում կատարվում էին որոշակի հիմնախնդիրների ուղղությամբ: Հնագիտության ու վիմագրության բաժինը նախաձեռնեց Կարմիր բլուրի պեղումները, որոնք բացառիկ նշանակություն ունեցան Վանի թագավորության պատմության ու մշակույթի ուսումնասիրության համար: Սկսվեցին նաև Արին բերդի պեղումները, ի հայտ եկավ Էրեբունի ամրոցը: Հայ հնագետներն ապացուցեցին, որ Հայաստանը եղել է մարդկության հնագույն օրրաններից մեկը: Արդյունավետ էին նաև Գառնիի պեղումները: 1953 թ. պատմության ինստիտուտի կառուցվածքում տեղի ունեցավ նոր փոփոխություն՝ ստեղծվեց ազգագրության խումբը, որը հետագայում միացավ հնագիտության ինստիտուտին:

1940-ական թվականների կեսերից պատմության ինստիտուտում արդյունավետ աշխատանքներ կատարվեցին հին և միջնադարյան Հայաստանի պատմության բարդ ու կնճռոտ, միաժամանակ առանցքային մի շարք հիմնախնդիրների լուսաբանության ուղղությամբ: Սուրեն Երեմյանը դրեց հին Հայաստանի հասարակարգի ստրկատիրական բնույթի հարցը՝ ելակետ ունենալով 1930-ական թվականներին Խորհրդային Միությունում մշակված ու ճանաչված տեսությունը: Գագիկ Սարգսյանը ևս հին հայկական հասարակարգը համարեց [illegible], միայն, ի տարբերություն անտիկ հասարակարգի, նա [illegible]ոշ գիծը համարեց թռիչքաձև զարգացումը: Հ. Մանանդյանը, Ս. Երեմյանը, Գ. Սարգսյանը և Ս. Կրկյաշարյանն ուսումնասիրեցին հին Հայաստանի

քաղաքները, քաղաքային համայնքը, առևտուրը, արհեստագործությունը: Նրանք հին Հայաստանի քաղաքների պատմության ուսումնասիրությունը շաղկապեցին Առաջավոր Ասիայի քաղաքների պատմության հետ՝ նշելով դրանց առանձնահատկություններն ու օրինաչափությունները: Նորովի լուսաբանվեցին հայկական թագավորությունների, Արտաշես Ի-ի, Տիգրան Մեծի վարած քաղաքականությունը, նոր խոսք ասվեց խորենացիագիտության մեջ: Ս. Երեմյանի գիտական հետաքրքրություններից դուրս չմնաց հայ ժողովրդի կազմավորման հարցի ուսումնասիրությունը: Նա ցույց տվեց, որ հայ ժողովրդի կազմավորումը տեղի է ունեցել Հայկական լեռնաշխարհում տեղաբնիկների և եկվոր հնդեվրոպական որոշ ցեղերի միավորման հիմքի վրա: Ս. Երեմյանը մշակեց նաև միջնադարյան Հայաստանի պատմության գիտական պարբերացումը, տվեց այդ ժամանակաշրջանի փուլերի սեղմ ու ամփոփ բնութագիրը: Նա միութենական գիտական հրատարակություններում հեղինակեց Վրաստանի ու Աղվանքի պատմության առանձին հատվածներ և իրավամբ դասվեց ականավոր կովկասագետների շարքը: Ս. Երեմյանը նաև բացահայտեց հայ իրականության սահմաններից դուրս եկող և համաշխարհային նշանակություն ունեցող «Աշխարհացոյցի» արժեքը: Միջնադարյան Հայաստանի պատմության առանցքային հիմնախնդիրներից մեկի՝ Կիլիկիայի հայոց պետության քաղաքական պատմությունը հիմնավոր ուսումնասիրեց Գ. Միքայելյանը: Հետագայում Կիլիկիայի պատմությանն անդրադարձան Ս. Բոռնազյանն ու Ա. Գալստյանը: Գյուղացիության պատմության ուսումնասիրությանը 1940-ական թթ. վերջերին ձեռնամուխ եղավ Ս. Հակոբյանը: Լ. Բաբայանը ցույց տվեց մոնղոլական նվաճման հետևանքով Հայաստանի սոցիալ-տնտեսական կյանքի ձևախեղումները և դրանց հետևանքները:

Լայն թափով առաջ մղվեց պատմագիտության օժանդակ բնագավառներից մեկը՝ աղբյուրագիտությունը: Վազգեն Հակոբյանը հետամուտ եղավ մանր ժամանակագրությունների համեմատական տեքստեր կազմելուն, իսկ այնուհետև՝ «Կանոնագիրք Հայոցի» ուսումնասիրությանը: Այդ աշխատանքի համար 1974 թ. նա արժանացավ Մեսրոպ Մաշտոցի անվան մրցանակի: Լևոն Խաչիկյանը ձեռնամուխ եղավ մեծ եռանդ ու հմտություն, նաև տևական ժամանակ պահանջող՝ հայերեն ձեռագրերի հիշատակարանների ժողովածուների կազմելուն: Այդ ժողովածուները սկզբում հրատարակվեցին պատմության ինստիտուտի, իսկ հետագայում՝ Մատենադարանի կողմից, երբ նրա հետ Մատենադարան տեղափոխվեցին մի քանի աղբյուրագետներ: Պատմության ինստիտուտում ձեռագրերի հիշատակարանների ուսումնասիրությունը շարունակեցին Աշոտ Հովհաննիսյանն ու Վազգեն Հակոբյանը: Հակոբ Անասյանը ձեռնամուխ եղավ «Հայկական մատենագիտության» ստեղծմանը, մի աշխատանք, որն իրավացիորեն համարվում է հայերենի գրական հուշարձանների հանրագիտարան: Բարեբախտաբար, այսօր իրականանում է այդ կոթողային գործի երրորդ հատորի հրատարակությունը: Հակոբ Անասյանի պատմաքննական ուսումնասիրությունը նոր ու հարուստ տվյալներով երևան է հանում XVII դ. Արևմտյան Հայաստանի

ազատագրական պայքարի պատմության հարցերը: 1950-ական թվականներին Աշոտ Հովհաննիսյանը հրատարակեց «Դրվագների» երկու գրքերը՝ նվիրված հայ ազատագրական մտքի պատմությանը: Այդ աշխատությունը մեր պատմական գիտության նվաճումներից է:

1950-ական թթ. սկզբից գիտական ասպարեզ մտած երիտասարդները նպաստեցին ուսումնասիրվող թեմատիկայի ընդլայմանը և աշխատությունների որակի բարձրացմանը: Ագրարային հարցերով զբաղվեց Վ. Բարխուդարյանը, պավլիկյան շարժումը և բյուզանդական սկզբնաղբյուրներն ուսումնասիրեց Հ. Բարթիկյանը, արաբական տիրապետության պատմությունը շարադրեց Ա. Տեր-Ղևոնդյանը, հայ-ասորական առնչությունների խնդրին անդրադարձավ Հ. Մելքոնյանը, սելջուկյան տիրապետությանը՝ Ս. Բոռնազյանը, XVI - XVIII դդ. քաղաքական ու սոցիալ-տնտեսական պատմությանը՝ Մ. Զուլալյանը, Հ. Փափազյանը: Նրանք ոչ միայն մենագրություններ հրատարակեցին այդ հարցերի վերաբերյալ, այլև Հայաստանի մասին օտար աղբյուրների հայերեն թարգմանությունների շարքը հարստացրին բյուզանդական, արաբական, ասորական, թուրքական նոր աղբյուրներով, իսկ հունական աղբյուրների թարգմանությամբ աչքի ընկավ Ս. Կրկյաշարյանը: Աղբյուրագիտական արգասավոր գործունեության համար Հ. Բարթիկյանը ևս արժանացավ Մեսրոպ Մաշտոցի անվան մրցանակի: Բ. Ուլուբաբյանը Հայոց արևելից կողմանց պատմությանը նվիրեց մի շարք գործեր: Նա արծարծեց հարցեր, որոնք խորհրդահայ պատմագրության կողմից չէին ուսումնասիրվել և հանդես եկավ հայոց պատմության ադրբեջանցի կեղծարարների քննադատությամբ:

Նոր դարի պատմության գծով մեծ ուշադրություն է դարձվել ազատագրական շարժումների հիմնահարցերին: Ա. Հովհաննիսյանը, Մ. Ներսիսյանը, Վ. Պարսամյանը, Գ. Գալոյանը և Վ. Դիլոյանն ուշադրություն դարձրին հայ-ռուսական հարաբերություններին, Արևելյան Հայաստանի՝ Ռուսաստանին միացվելու պատմական նշանակությանը: Նրանք հայ-ռուսական պատմական կապերը քննեցին միջազգային հարաբերությունների լայն հետնախորքի վրա: Տվյալ հիմնահարցին նվիրվեցին արխիվային նյութերի ու վավերագրերի մի քանի հատորներ:

Արդյունավետ եղավ թուրքական բռնակալության դեմ հայ ժողովրդի մղած ազատագրական պայքարի պատմության ուսումնասիրությունը: Այս բնագավառում առաջինը Մ. Ներսիսյանի մենագրությունն էր, որին հետևեցին Հ. Ղազարյանի, Ռ. Հովհաննիսյանի, Հ. Վարդանյանի, Ծ. Աղայանի, Ա. Համբարյանի և Հ. Պողոսյանի աշխատությունները: Պատմության ինստիտուտի նվաճումներից է Հայկական հարցին, ռուսաստանյան առաջին հեղափոխությանը, առաջին աշխարհամարտին, Մեծ եղեռնին նվիրված մենագրություններն ու արխիվային վավերագրերի հրատարակությունը, որոնք կյանքի կոչվեցին Մ. Ներսիսյանի, Գ. Գալոյանի, Վ. Միքայելյանի, Ա. Հարությունյանի, Դ. Մուրադյանի Ա. Մնացականյանի, Վ. Պարսամյանի, Մ. Հակոբյանի, Ն. Սարուխանյանի և Ս. Ստեփանյանի ջանքերով:

Հայկական գաղթավայրերի հիմնահարցերն արտացոլվեցին Վ. Բարխուդարյանի, Վ. Միքայելյանի Ս. Հովհաննիսյանի Զ. Ղասաբյանի, Լ. Պողոսյանի, Վ. Խաչատրյանի և Ք. Ավագյանի գործերում: Հրատարակության գործընթացում է հայ գաղթօջախների պատմությանը նվիրված բազմահատորյակը: Սփյուռքի պատմության ուսումնասիրության բնագավառում կարևոր է Կ. Դալլաքյանի և Է. Մելքոնյանի կատարած աշխատանքը:

Մի քանի ուղղություններով աշխատանքներ կատարվեցին հայ պարբերական մամուլի պատմության գծով: XIX հարյուրամյակի հայ պարբերական մամուլի պատմությամբ հիմնավոր զբաղվել է Մ. Մխիթարյանը, մամուլի առանձին օրգաններն են հետազոտել Լ. Գևորգյանը, Մ. Ադանալյանը, պոլսահայ մամուլի պատմությունը քննության է առել Վ. Ղուկասյանը: Արևմտահայ մամուլի և հասարակական-քաղաքական կյանքի պատմության ուղղությամբ բեղմնավոր աշխատանք է կատարում Ա. Խառատյանը: Հայ պարբերական մամուլի պատմության բաժնի կարևոր աշխատանքներից է Մ. Բաբլոյանի կազմած մատենագիտական աշխատանքը: Տպագրության գործընթացում է պարբերական մամուլի պատմության բազմահատորյակի առաջին հատորը: Զգալի աշխատանք է կատարվել նաև պատմագրության բնագավառում: XIX դարի ազգարային հարաբերությունների պատմագրության հարցերը խորությամբ քննել է Ս. Ալեքսանյանը: Ավատատիրական Հայաստանի պատմագրությունն ուսումնասիրել է Լ. Բաբայանն իր մի քանի մենագրություններում: Հայ պատմագրության առանձին հարցերի անդրադարձել են Վ. Բարխուդարյանը, Գ. Սարգսյանը, Կ. Խուդավերդյանը, Լ. Խուրշուդյանը, Ն. Սարուխանյանը, Դ. Մուրադյանը և Վ. Դիլոյանը:

Պատմության ինստիտուտում գիտական արտադրանքի ծավալի տեսակետից զգալի տեղ են գրավում Խորհրդային Հայաստանի պատմությանը նվիրված աշխատությունները, որոնք վերաբերում են ամենաբազմազան հարցերի: Այս բնագավառում զգալի ներդրում ունեն Հ. Էլչիբեկյանը, Ծ. Աղայանը, Ա. Հակոբյանը, Վ. Ղազախեցյանը, Գ. Գեղամյանը, Կ. Խուդավերդյանը, Ա. Գրիգորյանցը և Հ. Հարությունյանը: Վերջին տասնամյակներում շեշտակիորեն աճեց Հայրենական մեծ պատերազմի պատմությանը նվիրված աշխատությունների քանակը: Հրատարակվեցին ռազմաճակատներին, հերոսներին, զորահրամանատարներին, պարտիզաններին և ուրիշ հարցերի նվիրված ուսումնասիրություններ: Դրանց հեղինակներն են Ա. Մնացականյանը, Ե. Խալեյանը, Ք. Գրիգորյանը, Մ. Սահակյանը, Մ. Հակոբյանը: Հայրենական մեծ պատերազմի պատմության ուսումնասիրության մեջ կարևոր է Կ. Հարությունյանի ներդրումը: Նրա աշխատություններին բնորոշ է արխիվային հարուստ բազան:

Պատմության ինստիտուտում գիտահետազոտական աշխատանքներն ընթացել են նաև ընդհանրացնող, կոլեկտիվ աշխատությունների ստեղծման ուղղությամբ: Այս առումով կարևոր է հայ ժողովրդի պատմության

բազմահատորյակը, որի ստեղծման աշխատանքները ղեկավարեց ինստիտուտի նախկին տնօրեն Գ. Գալոյանը: Մեծ էր նաև փոխտնօրեն Վ. Բարխուդարյանի ներդրումը: Հայ ժողովրդի պատմության ութհատորյակը եզակի, հայ պատմագիտության վերջին տարիների նվաճումների աղբյուրագիտական ընդգրկուն բազայի հիման վրա գրված գործ է, ուր պատկերված է հայ ժողովրդի անցած բազմադարյա ուղին՝ խոր հնադարից մինչև մեր օրերը:

ՀՀ անկախության հռչակումից և ինստիտուտում կատարված վերափոխություններից հետո կատարվում է նախկինում անուշադրության մատնված մի շարք թեմաների ուսումնասիրությունը, ուշադրություն է դարձվում աչառու ներկայացված հիմնախնդիրներին: Հ. Ավետիսյանը ընթերցողի սեղանին դրեց իր լավագույն աշխատություններից մեկը՝ «Հայկական հարցը 1918 թ.»: Այնուհետև նա հրատարակեց նոր աշխատություն, որը նվիրված է 1918 թ. մայիսյան հերոսամարտերին, հայոց ազգային միասնությանը: Գ. Գալոյանը նորովի ուսումնասիրեց 1917-1923 թթ. Հայաստանի պատմությունը և մեծ տերությունների երկդիմի քաղաքականությունը: Ա. Մելքոնյանը զբաղվեց պատմական ժողովրդագրության խնդրով, որը նոր ուղղություն էր հայ պատմագիտության մեջ: Նա հրատարակեց Էրզրումին նվիրված մենագրություն, այլ աշխատություններ և արժանացավ «Հայաստան» հիմնադրամի գլխավոր մրցանակին: 2003 թ. լույս տեսավ հեղինակի «Ջավախքը XIX դարի վերջին և XX դարի առաջին քառորդին» ծավալուն աշխատությունը, որտեղ սկզբնաղբյուրների լայն հենքի վրա շարադրվել են երկրամասի քաղաքական, ժողովրդագրական, սոցիալ-մշակութային պատմության իրողությունները: Է. Դանիելյանը և Է. Կոստանդյանը մենագրություններ նվիրեցին եկեղեցուն ու հոգևոր գործիչներին:

Այժմ պատմության ինստիտուտի աշխատակիցները ՀՀ ԳԱԱ ակադեմիկոսներ Հ. Ավետիսյանի, Հ. Բարթիկյանի, Վ. Բարխուդարյանի, Վ. Միքայելյանի, Հ. Սիմոնյանի, թղթակից անդամ Ս. Կրկյաշարյանի և ուրիշների հետ ձեռնամուխ են եղել նոր գործերի, որոնցից առաջնայինը հայոց պատմության նոր բազմահատորյակի ստեղծումն է:

Այսպիսով, իր 60-ամյակը բոլորած պատմության ինստիտուտի աշխատակիցների ջանքերով ստեղծվել է հայոց պատմության տարբեր հարցերին նվիրված գիտական պատկառելի և մնայուն ժառանգություն: Պատմության ինստիտուտը եղել և մնում է Հայաստանում պատմական գիտությունների և հայագետ պատմաբան կադրերի պատրաստման խոշոր կենտրոն: Ինստիտուտի առջև դրված են նոր, առավել պատասխանատու խնդիրներ, որոնք նա ի զորու է իրականացնելու:

**ԳՐԻԳՈՐՅԱՆ Գ. Ս.**
ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտի
գիտական գծով փոխտնօրեն